ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Հատիք-ն ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/083 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
1	Ցուցանակի հիմնակմախքը (կարկասը) պետք է պատրաստված լինի քառակուսի մետաղական կոնստրուկցիայից։ Ցուցանակի բարձրությունը պետք է լինի 1.20 մ., լայնությունը 1 մ., իսկ ընդհանուր բարձրությունը ոտքերի հետ միասին գետնից հաշված 1.70-1.80 մ.։ Ցուցանակի ոտքերը պետք է լինեն հաշվարկված այնպես, որպեսզի ցուցանակի շահագործման ժամանակ ցուցանակը չճկվի և մնա անշարժ։ Ցուցանակի հետնամասը, որի վրա պետք է ամրացված լինեն էջերը պետք է պատրաստված լինի կապույտ անփայլ ՄԴՖ-ից։ Ցուցանակը պետք է լինի գրքի նման էջերով թերթվող։ Թերթերը պետք է պատրաստված լինեն լամինատից, թերթի բարձրությունը 95-100 սմ, լայնությունը 40-45 սմ։ Ամեն էջի վրա պետք է լինի 6 A4 ֆորմատի թղթի համար նախատեսված գրպաններ՝ թուղթը ամրացնելու համար, որոնք պետք է ծածկվեն թափանցիկ օրգանական ապակիով և հնարավորություն ունենան կողպվելու։ Թերթերի քանակը 9 և հետնամասի վրա ամեն կողմից 1 էջ։ Թերթերը հիմնակմախքին պետք է ամրացված լինեն ծխնիների միջոցով։ Ցուցանակի վերին հատվածից հաշված 23-25սմ լայնության վրա պետք է լինի ՀՀ պետական դրոշը, որի վրա երեք լեզվով (հայերեն, ռուսերեն, անգլերեն) պլաստմասե տառերով գրված լինի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» գրվածքի ձախ մասում մաքսային ծառայության զինանշանը, որի օրինակը կտրամադրվի էլեկտրոնային տեսքով։ Գրվածքի տեսակը «GHEA Grapalat» գույնը սպիտակ, շրիֆտը 270 ± 10։ Բոլոր մետաղական կոնստրուկցիաները պետք է փոշեներկված լինեն հակակոռոզիոն ներկով։ Ներկի գույնը պետք լինի մոխրագույն։ Ցուցանակի գծագիրը կցվում է (տես նկար 1)։ Այլ պայմաններ։ • Մատակարարվող ապրանքը և օգտագործվող նյութերը պետք է լինեն նոր՝ չօգտագործված։ • Ապրանքի մատակարարումը,

	բեռնաթափումը և տեղադրումը իրականացնում է Մատակարարը՝ իր հաշվին և իր միջոցներով։ • Ապրանքի համար սահմանվում է երաշխիքային ժամկետ՝ պատվիրատուի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից 365 օրացուցային օր

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Атик в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/083 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
1	